

ՏԻԳՐԱՆ ՅԵՍԱՅԱՆ


1874—1921


P
28.361

4014.

ՏԻԳՐԱՆ ՅԵՍԱՅԱՆ

1874—1921





ԽԵՐԱՎՈՒԹՅՈՒՆ

Հ. Ս. Խ. Զ. ԿԵՐՊԱՐՎԵՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՆԴԱՐԱՆ

ԿԱՏԱԼՈԳ
ՏԻԳՐԱՆ ՑԵՍԱՅԱՆԻ
ՑՈՒՑԱՅԱՆԴԵՍԻ

ՅԵՐԵՎԱՆ
1935

ՏԻԳՐԱՆ ՇԵՍԱՅԱՆ ՆԿԱՐԻՉ-ՔԱՆԴԱԿԱԳՈՐԾ

Կերպարվեստի մարքսիստական պատմագրությունը դեռ ևս չի լուսաբանել 19-րդ դարի կեսից մինչեւ պրոլետարական հեղափոխությունը ձգվող, հայ կերպարվեստի բարդ և բարձակողմանի շրջանն ընդհանրապես՝ և թուրքահայ կերպարվեստի պատմությունը մասնավորապես։ Թյուրքահայ մի քանի տասնյակ աշքի ընկնող կերպարվեստագետների ստեղծագործությունները մինչև այժմ ել ծանոթ չեն մեր լայն հասրակայնությանը։

Մեր նպատակը չե այս փոքրիկ հոգմածում, նրկիրված մասնավորապես Տիգրան Ցեսարանին, պատմական վերլուծումն անել այդ շրջանի, սակայն քանի վոր խոռքը պոլսահայ արվեստագետի մասին և, անհրաժեշտ և համառոտակի զծերով տակ ժամանակը և այդ շրջանի արվեստի բնորոշ կողմերը։

Պոլիսը, ինչպես հայտնի յէ, 1800-ական թվականներից սկսած հանդիսացել ե թյուրքահայության քաղաքական-հասարակական-կուլտուրական կյանքի կարևորագույն կենտրոններից մեկը։ Պոլսում հաստատված հայ առևտրականացների կապիտալը, հայ վաճառականությունը, ամիրայությունը իր տնտեսական-քաղաքական նորաստակների իրադորժման համար, սուած եր քաշում արդահավաք-



6-28361

ման, պղղային ինքնորոշման լոկունգը: Հայ հոգեորականությունը վողի ի բոխն աշխատում եր հայ բուրժուազիայի քաղաքական նպատակների իրագործման համար: Բնական ե, վոր այս բուրժուազիան իր դաստիարակային նպատակների համար յեռանդագին կերպով ողագործել արվեստն ու դրականությունը: Այդ ժամանակաշրջանի արվեստն իր բովանդակությամբ ընթացել է հիմնականում յերկու բնորոշ ուղղություններով. առաջինը՝ նացիոնալիստական թունոտ, ուազմատենչ տրամադրություններով. յերկորպը՝ ծայրահեղ անհատապաշտությամբ, միասիկայով, կյանքից խոռափող յեախ փառաբանության և գովքի ուղղությամբ: Կերպարվեսոր արձադանքել է յերկու ուղղությամբ ել: Քիչ չեն առաջին տեսակին պատկանող, գուեհիկ նասուրալիզմով շաղախամծ, արվեստի վորակի տեսակետից անարժեք գործեր, պատմություններ վերցրած «Վարդոնաց պատերազմների», Տիգրան Մեծերի, Արտաշեների, «Աղդային յերեվելիների» և վերջապես «Աղդի փրկիչ» սեվորդ պատրիարքների պարտեները: Այդպիսով կերպարվեստագետների մի մասը կատարել է իր ժամանակին հայ բուրժուազիայի դաստիարակային պատվերը:

Կերպարվեստագետների մյուս մասը, յելած քաղաքի արհեստավորական դասից, դավառի աշխատավորության ծոցից, թեպետ չենթարկվեց աղդայնական տրամադրություններին, ոտեղին չափային չուսալու համար տրամադրությունների դեմ: Խորանալով հուսալքման և իր յենթաշխարհի մեջ, ինքնապարփակվեց ու վերածվեց ծայրահեղ անհատապաշտաների մի խմբակի: Այդ թվին պատկանող արվեստագետների ստեղծագործությունները, մեր պատմության համար, արժանի

յեն լուրջ ուսումնասիրության և գնահատության, վորովհետեւ նրանց պարմատը հասավ կերպարվեստի կուլտուրայի վորոշ բարձունքներին և տվեց այդ ասպարեզը հարստացնող արժեքավոր գործեր:

Մոտիկ անցյալի կերպարվեստի բովանդակության և պատմական յերեսությունների ուսումնասիրության տեսակետից— չնայած սոցիալական միջավայրերի տարբեր առանձնահատկությունների— կարելի յե զուգահեռ անցկացնել թյուրքահայ և կովկասահայ կերպարվեստագետների ստեղծագործությունների միջև: Յերկու տարբեր միջավայրերի արվեստագետների գեղարվեստական պլոտուկցիան ընթացել է բուրժուազդայնական և բուրժուական անհատապաշտական բովանդակությամբ: Այն տարբերությամբ սակայն, վոր առաջինը՝ կերպարվեստի կուլտուրայի տեսակետից յեթե գտնվում եր յեվրոպական (հատկապես իտալական և Փրանսիական) արվեստի խիստ աղղեցության տակ, յերկորպը՝ այդ աղղեցությունը կը բում եր բացառապես ոռուսական արվեստից: Առեւըրա-տնտեսական կապերի կախումն այդ յերկրներից, պայմանագործում եր նաև կուլտուրաների անխուսափելի կապն ու աղղեցությունը:

Պոլսում, չորսհայիլ թյուրք առաջավոր լնտելի-գենցիայի ջանքերին հիմնվել և 1890-ական թվականներից սկսած կանոնավորապես գործում եր Գեղարվեստական դպրոցն իր մի քանի ֆակուլտետներով (քանդակ, յուղանկար, գրաֆիկա և ճարտարապետություն): Թյուրքահայ արվեստագետների սուաջավոր թեփր, սկզբնական կրթությունը այդ գպրոցում ստանալուց և ավարտելուց հետո ձգտում եր գեղի յեվրոպական յերկրները: Այդ մղումը հասկանալի յեր մի քանի պատճառներով, նրանցից առաջինը այն եր,

վոր այդ իմբի գեղարվեստական արտադրությունն ուղղակի կերպով չեր արձագանքում տվյալ շրջանի բուրժուազիայի պահանջներին և հանդիպում եր վերջինի կողմից անտարբեր վերաբերմունքի . յերկրորդի այն վոր Պոլսո նման կերպարվեստի կուլտուրայից աղքատ միջավայրը չեր կարող ապահովել վերաբերվետագետների մի ամբողջ սերնդի հետագա աճն ու լայն զարգացումը, վորը աղատագրված աղջային սահմանափակությունից փնտում եր նոր և լուսավոր հորիզոնները : Վերջին յերկութիւնից հետևանքով ել մենք տեսնում ենք ավելի ուշ, այդ արվեստագետների ստեղծագործությունների մեջ բարձաձև և այլազան մի շարք ուղղությունները : Զուլելով ժամանակի ընթացքին տվյալ տերիտորիայի աղջության կուլտուրայի հետ, կորցնելով ձեւի յուրահատկության այն ել դեռ չձեւակերպված վիճակը, նրանք ի վերջո դառնում եյին նույն կուլտուրայի յերթեմն շատ տաղանդավոր ներկայացուցիչները : Այլպիսի արվեստագետներ են յեղել քանդակագործ Յերվանդ Վոսկանը, Հ. Փափազյանը, Զ. Կեռյոյուբեյուքյանը, նկարիչներ՝ Զ. Զաքարյանը, Եղիկար Շահենը, Նշանյանը, Շաբանյանը, Հ. Փուշմանը, Մախոնյանը, Քյուրքչյանը և ուրիշները : Այդ շարքին ե պատկանում նաև, արժեքավոր իր ստեղծագործություններով և արտակարգ ընդունակություններով ոժտված նկարիչ-քանդակագործ Տիգրան Յեսայանը : Մոտ մի հինամյակ ապրած արվեստագետնի ստեղծագործությունների հիմնական թեմատիկան հանդիսացել են դիմավորապես քաղաքի պեյզաժը, ընտանեկան ինտիմ մոմենտները, տան լուսամուտից դիտվող պարտեզի կամ բակի անկյունը, շրջապատի մոտիկ անձանց պնդութեանները և այլն : Մի քանի կոմպոզիցիոն աշխատանքների փորձերն ու իլյուստրացիաները հաստատում են այն,

վոր նկարիչը չունենալով մեծ կտավների հասունակ տեխնիկական անհրաժեշտ պատրաստականությունը, սահմանափակվել ե ետյուղացին նկարչության շրջապատում և կարողացել ե այդ ասպարիդում հասնել վորոշարպետության :

Տիգրան Յեսայանն իր նախնական կրթությունն ստացել ե Պուլում : Աշակերտել ե այդ դպրոցի առաջին և շատ աղջեցիկ մանկավարժներից, իստալացի նըկարիչ-ճարտարապետ Վալերին և տաղանդավոր քանլակադուծ Յերվանդ Վոսկանին : Սկզբանական ուսանողական աշխատանքների մեջ, հատկապես նրա մինչև Փարիզ ուղղելու 1896 թ., յերիտասարդ նկարիչը գտնվել է անհուսափելի կերպով իստալական ակադեմիական ուսաւողմի և մասամբ նասութարիկովի աղջեցությունների տակ : Ինքը, Վալերին, այդ դպրոցի կարգառուն ներկայացուցիչներից մեջը վիճելով թողել եր նրա ակդրանական գործերի վրա վորոշակի աղջեցություն : Տ. Յեսայանի այդ տարիների աշխատանքները համարված են նասութային խորապես ծանոթանալու և մանրակրկիտ ուսումնասիրության փորձեր կատարելու գրական մոտեցմամբ : Նրա պորտրեները (№ մեկից վեց) այդ աղջեցության հաջողված նմուշներն են հանդիսանում : Պեյզաժ-ային ետյուդները, սկանակ նկարչի համար, այդ շրջանի պորտրեների համեմատությամբ, պետք ե համարել փորձեր, վորոնք գերծ չեն գունային սահմանափակությունից (№ 7-ից 9-ը) : Նկարչի ստեղծագործության առաջին ետապը սակայն, չի կարող հանդիսանալ նըրար արվեստի բնորոշիչը : Տ. Յեսայանի արվեստի կարգերագույն և բեղմնավոր շրջանը մկանում ե 1896 թմբականներից, Փարիզից :

1890-ական թվականների Փրանսիական արվեստը լի յեր հականություններով, արվեստի տարրեր հոսանք ների և ուղղությունների պայքարով բաղխումնեցով։ Մի կողմէց գերիշխում եր ակադեմիական, այսպես կոչված պաշտոնական տրադիցիոնալ արվեստը հանձնան Գեղ. Բարձր. Ակադեմիայի և նրա չուրչը համախմբած պահպանողական արվեստագետների խրմակցության. մյուս կողմէց բուրժուական ռեալիզմը, արդեն իսկ քաղաքացիական իրավունքներ վայելելով այդ ժամանակաշրջանի աղղեցիկ հոսանքը իմպրեսիոնիզմը ու նրա հետ միասին Փորմալիզմի մի քանի այլ ձևերը (ալուանտիլիզմ, նեոպրեայոնիզմ և այլն) խռախտում ելին առաջինի հետարանը։ Կեղծ կրասիցիոնի ակադեմիզմի խախուտ հմտքերին կառչած պահպանողական արվեստը, հետզհետեւ տեղի յեր տալիս բուրժուական ռեալիզմին և հասկապես Փորմալիստական նոր ուղղություններին։ Սակայն ակադեմիականները վաղուց ի վեր դրաված լինելով Գեղ. Ակադեմիայի նման կարմոր գործոնը, շարունակում ելին դաստիարակել սերունդներ նույն քարացած և հետարդիմական մեթոդներով ինչ յեղել եր հարյուրամյակներ առաջ։ Չնայած նրան վոր արվեստի նորագույն ակզառույն գործույթը ժամանակի բնիշտացքում Ակադեմիայի պատերից ներս խուժեցին և խոշոր փոփոխություններ մտցրին նրա նեղքին կյանքում, այնուամենայնիվ դեռ մինչև այսոր ակադեմյան վարութեաների ընտրությունը և առաջնությունը տրվուած նրանց, ովքեր շարունակողներն են պաշտոնական արվեստի հարացիությաների։

Եերիտասարդ նկարիչ Տ. Յեսայանն ընկնելով այդ միջավայրը կրեց յերկու ուղղությունք ել այդ ազգեցությունները։ Մի կողմէց աշակերտելով Ակադեմիա-

յում, Ժան-Պոլ-Լորանսի նման ծայրահեղ պահպանողական վարպետին, ստեղծվեց յենթարկվել տրադիցիոն արվեստի միջբունքներին։ մյուս կումից կյանքի և բընության այլազան յերեսույթներով վոգեորչող անձնավորությունն, վերաբտագրեց այդ յերեսույթները իմպրեսիոնիզմի աղղեցության տակ։ Զհայտնաբերելով անհրաժեշտ վճռականությունն ու հետևողականությունն աղատությալի լուսակամ կամ մյուս արվեստի հակադիր ակադեմիզմի սովորական մինչև իր կյանքի վերջը վորդեգրեց, պորտրետային ժամանում Ակադեմիայի ուղղությունը, իսկ պելյաժային մասն ձևերի մեջ՝ իմպրեսիոնիզմը։

Ցուցահանդեսը մանրակրկիտ գիտող այցելուն, նկարչի ստեղծագործության միջ այդ տարբերությունը կնկատի, յերբ համեմատի նրա պորտրետները բազմաթիվ վրաքը պեյզաժային ետյուդների հետ։ Ինչքան առաջիններում, չնայած մողելի հոգեբանության ներթափանցման իր խոչոր և դրական տվյալներին, ներկայանում են պորտրետի կոմպոզիցիոն, գույնային և ընդհանուր մշակման մինչև նասուրալիզմը հասնող պահպանողականությամբ, այնքան նա իր պեղաժային ետյուդներում, տրամադրությունների արտահայտության տեսակետից անմիջական ե, գույնային յերանցների տեսակետից հարուստ, բազմագան, գրավիչ և ներգոծող։ Նկարչի հարյուրից ավելից ցողացրած պեյզաժային գործերի ժամանակադրական կարգը (տես կատալոգը) ցույց է տալիս նրա արվեստի աստիճանական դարքացումը գեղալի իմպրեսիոնիզմը։ Սակայն Տ. Յեսայանի պեղաժային աշխատությունները այսուհետու այսուհետու այսուհետու ամուշներ համարել չենք կազող, նրանց մեջ, համեմատես փարիզյան սկզբնական ցրջանին պատկա-

նողների մեջ, նկատմակի յե ռեալիզմի և թե հաճախակի նստուրալիստական տարրերի խառնուրդը: Նըրանցից № 21, 37, 38, 49, 57, 61, 79, 88, 101, 119, 133, 135, 141, 152-154 և մի քանի այլ ետյուդներ իրենց արվեստի կուլտուրայի տեսակետից հանդիսանում են դուռանկարչական լավորակ և բարձր արժանիքներ ունեցող գործեր:

Հետաքրքիր են նաև վորագես յուրահատուակ ձեւ, նկարչի գունավոր մինյատուր նաբրածկաները (№ 96—100), արված վարիզյան բուլվարների բոպեյական տարաշորություններից: Այդ ձևի կիրառումն մեր որերին, հետադա ողտագործումների տեսակետից, կապահովի խորհրդացին նկարչի կյանքի բազմազան յերմութների անմիջական տպագորությունների դրոշմելու:

Տ. Յեսայանը փորձել է նաև կոմպոզիցիոն կրտագիտությանը: Յուցադրամծ նմուշները մնացել են անսպազմատ: Իդեյական բովանդակությամբ վորեւե կոմպոզիցիոն մեծ կտավ, պահանջում է արվեստի մեթոդի և սկզբունքայնության խիստ հետևողականություն, ինչպես նաև, տեխնիկական անհրաժեշտ բարձր պատրաստականություն: Տ. Յեսայանը ինչպես վերևում նշեցինք չհաղթահարեցով առաջինը, կյանքի դժվարին պայմանների հետևանքով չկարողացավ տիրապետել նաև յերկրորդեն արվեստի տեխնիկական: ավելի բարդ միջոցներին: Դրա հետևանքով ել նկարչի ձեռնարկած այլ փորձերը մնալով անմշակ չեն հանդել վերջնական ամբողջականության: Սակայն այդ կարգի աշխատանքների մեջ աչքի յեն ընկնում մեծ նկարչների նախապատրաստական եսկիզային հաջող գործերը ինչպես «Շախաել-պահաել» (№ 94), «Դպրոցը» (№ 115):

Տ. Յեսայանն աշխատել է գունանկարչության և

նկարչության աեխմնիկայի տարբեր տեսակներով, յուղաներկ, ջրաներկ, պաստել, ածուխ, մատիտ, սանդիմա, տուչ: Հատկապես նաև խորացել ե յուղաներկի և ջրաներկի մեջ, հասնելով տեխնիկական ակնհայտ վարպետության: Նկարչի գործերի մեջ առանձնապես պորտրետներում, աչքի յե ընկնում արյեստագետի դեպի նկարը (ԾԱԿՈՒՈ) ունեցած բժախնդիր, անկեղծ և լրջախոհ մոտեցումը:

Տ. Յեսայանը միևնույն ժամանակ տվել է նաև քանդակագործական աշխատություններ: Լինելով Պոլսում Վուկանի և Փարիզում մերալյոր Պոնակազմի աշակերտը, նա կարճ ժամանակում ձեռւք և բերել պլաստիկական ակներև լնդունակություններ: Նրա աչխատություններից թերեւող «Դերմիչ» կիսարձանը, տալիս ե վորպես քանդակագործի, նրա պլաստիկ ճշշումնողության և ուժեղ արտահայտաչափանության պարզ պատկերը: Դժբախտաբար նա իր կյանքի վերջին տարիներին այդ ուղղությամբ այլևս չի գրաղվել:

Տ. Յեսայանի մասնակցությունը ցուցահանդեսներին յեղել է սակայն: Նա առաջին անգամ Փարիզում 1908 թվականին, հանդես ե յեկել Արքեյ խմբակցության ցուցահանդեսին «Պոլսո զերեղմանատունը», ՓԱԿուստարի ստորագրում», «Պոլսո վողոցներից», և մի քանի այլ նկարներով: 1912 թվին յերկրորդ և վերջին անգամ մասնակցել է «Կանանց արվեստների և արհեստների» միջազգային ցուցահանդեսին «Մորն արժանի» մի մեղադիմ նախարգելով, վորն արժանացել է առաջին մրցանակի և դրական գնահատականի:

Տ. Յեսայանի թողած արվեստն ունի դրական և արժեքավոր կողմեր և մեր խորհրդացին կերպարվեստի համար քննադատորեն ոգտագործելի գրալի մատերիալ:

Պետական կերպարվեստի թանգարանի կողմից
կաղմակերպված այս ցուցահանդեսը, հանձինս Տ.
Յեսայանի ստեղծագործությունների, առիթ պետք է
հանդիսանամ մեր խորհրդային կերպարվեստագետների
հասարակայնության համար ուսումնասիրելու և վե-
րագնահատման յենթարկելու մոտիկ անցյալի կերպար
վեստի բազմակողմանի ստեղծագործական յերևույթ-
ները և այդ արվեստի քննադատական ոգտագործ-
մամբ, հարստացնելու մեր սոցիալիստական վերելքն
ապրող կերպարվեստի կուլտուրան:

ԱՐԱ ՍԱՐԳՍՅԱՆ

Ե. ՀՅՅ

ՆԿԱՐԻՑ ՏԻԳՐԱՆ ՅԵՍԱՅԱՆ

(ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՈԹԵՐ)

Տիգրան Յեսայանը ծնած է 1874 թ. հունվար ամ-
սին, Կ. Պոլիս, Որթագյուղ: Նրա հայրը՝ Թովմաս Յե-
սայան բարձր կրթության տեր մարդ եր և իր ժամա-
նակի հասարակական հայտնի գեմքերից մին: Տիգ-
րանը իր մայրը կորսնցուցած եր հինգ տարեկան հա-
սակում: Թե հայրը և թե մորեղայշը, Միքայել
Փորթուգալյանը ուզած են Տիգրանը պատրաստել դի-
վանագիտական ասպարեզի համար և ուրեմն մանկա-
կան տարիներից, ապագա նկարիչը մայրենի լեզվի
հետ սովորած ե Փրանսերեն և թրքերեն լեզուները,
Փրանսիացի վարժուհիի և թուրք ուսուցիչի ողնու-
թյամբ: Բայց հազին տասը տարեկան, Տիգրանն ու-
նեցած է շեշտված հակում դեմք գեղարվեստը և ինքը
վորոշած է նվիրվել նկարչության և արձանագործու-
թյան:

Նա իր յերկրորդական ուսումը սահցած է Կ.
Պոլսո կենտրոնական վարժարանը և հետո իր ցանկու-
թյան համեմատ մտած է Կ. Պոլսո Գեղարվեստից վար
ժարանը ուր աշակերտած ե իտալացիներից Վալերիի
և հայտնի արձանագործ Յերվանդ Վուկանի:

Տիգրան Յեսայանը փայլուն կերպով անցուցած է
իր ուսանողական ըրջունը Պոլսո պետական Գեղար-



վեստից վարժարանի մեջ, վորուն ընթացքը ավարտած է արձանադորձության առաջին մրցանակը ստանալով իր քանդակական «Դեվրիչ» բյուստի համար։

Անմիջապես հետո, Տիգրան Յեսայանը, լավագույն նյութական պայմաններու մեջ մեկնած և Փարիզ, 1895-ին, այնտեղ կատարելագործելու համար իր գեղարվեստական ուսմունքը և Փարիզում, մուտքի կոնքուրը հաջողությամբ անցնելով մտած և Փարիզի Գեղարվեստից վարժարանը իրու ուսանող, միենույն տաեն արձանագրվելով Ակադեմիա Ժյուլյանի դասընթացքներին ուր աշակերտած և Ժան-Բոլ-Լուրանսի։

Մեկ տարի չանցած, Տիգրանի նյութական վեճակը խախտվում է և միենույն տաեն նկարչական ուսմունքի ասպարիզում յենթարկվում է մի տեսակ ներքին պայքարի։

Պարզ է, վոր Կ. Պոլսո մեջ Տիգրան Յեսայանը յեղած և խախտական նկարչության ազդեցության տակ։ Բայց Փարիզի մեջ զբարով Փրանսիական նորկարչության հաստուկ պահանջները և ըմբռնելով Փըրանսիական նկարչության գերազանցությունը ուզած է ամբողջովին հրաժարվել այն որդյունքից, վոր ձեռք բերած ել արդեն Կ. Պոլսո մեջ։

Նա մեծ խզմատությունով և համառ աշխատանքով ուղղում էր ձեռք բերել նախ Փրանսիական նկարչության գիտությունը, տեսնելիկան։ Այդ պատճառով նա անցած է պրոֆ. Պոնսկարմի բաժինը, վոր Պետքեղարվեստից վարժարանի մեջ զեկավարում էր մեղայլների և գրամմերի ստուդիան։ Հաճախ լսած է Տիգրանից, վոր մեղալների համար գծագրությունը պետք է լինի գրադետ, անթերի, վորպեսզի պատկերը վերածվելով չատ փոքր ծավալի կարողանա պահպա

նել իր հական դիմերը։ Այդուղի այլևս աչք խաբող կողմանակի հատկությունները չեն դորել ծածկելու կամ մեղմացնելու գծագրության թերությունները։ Տիգրան Յեսայանը ունենալով գույների մեծ զգացում, կամովին հրաժարած է վորոշ ժամանակ յերանդականակ գործածելուց, վորաբեզի առանց յենթարկվելու գույների հրապույրին, կարենա ձեռք բերել ուժեղ գծագրական տեխնիկա։ Նա նույնպես առում էր թե նկարիչը պետք է ունենա նկարչական այնպիսի հարուստ գիտությունն, վոր ճերմակի վրա սեածուխով կարենա տալ բոլոր գույների և նրանց յերանդների արժեքը։

Նա մեծ կարուսով ուղղում էր նաև քանդակելու այլ ակնարկելի եր, չունենալով ատրմիե և նման վորեե հարմարություն։

Տիգրան Յեսայանը միշտ վայելած է իր վարպետների համարումը և հարդանքը։ Նրա լրջությունը, բաղմակողմանի գատարակությունը, և բացարձակ անշահանդրությունը ինչպես նրա այլ ասպարեզի ընդունակությունները ներշնչած են ընդհանրապես այն կարծիքը, վոր նա իր մեջ ունի մեծ արվեստագետի բոլոր ապյաները։

Սակայն ուսանողական յերկրորդ տարիեն խև Տիգրան Յեսայանը ստիպված է, զուգահեռաբար իր ուսմունքի, ուղիւ աշխատանքներ կատարել՝ ապրելու համար։ Նա պետք է ասել, չե՞ր բնդունում նաև վորեւ պատվեր, իսկ յեթե ընդուներ իսկ, որինակի համար մեկի մը պորտրեն նկարել, ավելի շուտ ուսումնասիրություններ կը կատարել կենդանի մողելի վրայից, ինչ վոր հաճախ անախորժ և յերեմն գլարձալի տեսարանների տեղիք կուտային։ Ավելի հաճախ լույրի թանգարանից ընդորինակու-

թյուններ կաներ . բայց այլտեղ ևս ինքը կընտրեր եր նկարիչը , իր պատկերը և վոչ թե այն , վոր կարող եր դյուրավ ծախմել որվաշ չուկայի պահանջի համեմատ : Նա սիրում եր հին նկարիչներից Կոյան , Ռամբելը անտառանուը , Տիեպոլոն , խոր հիացում ուներ Լիոնարտո գլու Վինսիի և Տիգիանայի նկատմամբ , իսկ ամենից շատ իրեն համար ոգտակար եր համարում կոմիաներ անել ինկրից : Արխիվների մեջ նա վորոնուամ եր տալյալ նկարիչների գծադրությունները և խղճամիտ կերպով ուսումնասիրում եր :

Իսկ այդ միջոցին նա ընկած եր նյութական դժվարին դրության մեջ : Հայրը յերգեմն մի վորոշ գումար դրկում եր տղուն բայց վոչ կանոնավրապես :

Անսահման կարուտով հիշում եր Կ . Պոլոսկանկարները և ուզում եր իր ձեռք բերած նոր միջոցներով՝ նոր նկարներ ստեղծագործել :

1902-ին , հոգնած նյութական դժվարություններից , ծանրաբեռնված լնտանեկան հոգսերով , մղյան արևելքի կարուից տեղի տվեց իր մեկ աղջականի ստիպողական խնդիրքին . վոր հոր կողմից յեկած եր Փարիզ և համաձայնեց վերադառնալ Կ . Պոլիս :

Բայց անմիջապես , այն մտահոգությունները , վոր նկարիչը ունեցել եր իրականացան : Սուեդվել եր իր և լնտանիքին , նույն իսկ հորը մեջ տրամադրությունների անհաշտելիություն : Խորապես տառապում եր նա այն բուրժուական հոգեբանությունից և մտայնությունից , վոր տիրում եր անմիջական շրջապատում : Մյուս կողմանն համիտյան բեմը անհնարին եր դարձնում վորեւ աղատ աշխատանք : Չեր կարելի յերթալ բացության նկարել . յերկու անգամ ձերբակալել եյին նրան և թեև անմիջապես արձակել եյին լսելով իր ընտանեկան անունը , այնու-

ամենայնիվ մթնոլորտը չեր դադարում անշնչելի լինելուց , իսկ Տիգրանը վորմե չափով չեր կարող հանդուրժել այն զիջումներին , վորոնք անհրաժեշտ եին կարենալ ապրելու յիղանակ մը դունելու համար այդ դժոխային պայմանների մեջ :

Հակառակ ուրեմն հոր պնդումներին 1905-ին Տիգրան Յեսայանը վերադարձավ Փարիզ իր ընտանիքով : Նա իր վերջին նյութական հանրավորությունները տրամադրել եր ճամբորդական ծախքերուն և Փարիզ հասեր եր գրասանը ունենալով 5 ֆրանք՝ մայրսի 1-ի նախորդ իրիկունը , յերբ Փարիզի պրոլետարիատը պատրաստվում եր ցույցի , հակառակ կառավարության ձեռք առած խիստ միջոցներուն : Բայց յերջանիկ եր և վոգմորիմած և չեմ հիշում իր կյանքի մեջ վորեւ շրջան , վոր նա այնքան յերջանիկ զգացած լինի ինքնիրան :

Կյանքի պահանջները վերածելով ամենահսմեստ սահմանների , Տիգրան Յեսայանը , դժվարավ վաստակելով իր կյանքը և իր ժամանակի ամենամեծ մասը հատկացնելով գեղարվեստական ուսումնասիրությունների՝ արդեցավ Փարիզում մինչև Ռամանյան սահմանադրության հռչակումը : Այդ շրջանին նա ձեռք բերել եր արդեն վորոշ տեխնիկա և պատրաստվում եր ձեռնարկելու մեծ կոմբուլցիաների բայց անմիջապես վոր սկսում եր նկարել իր հին նկարչական ունակությունները և նոր սկզբունքները մտնում եյին պայքարի : Նա հաջողությամբ յերբեմն ավարտում եր մսաեր նույնիսկ կերտուողությամբ , բայց այդ արդյունքին մեջ սեմնելով իր հին շրջանից տարրեր , սրբում եր անմիջապես : Նա տառապում եր և չեր կարողանում մի սինտեղի հասնել և հետապնդում եր այդ նպատակը : Նա շատ արագությամբ կատարում եր ետյուտներ , գրեթե վայրկենական սիլուետներ , դիմանկարներ բայց

յերբ լուրջ և մտածված աշխատանքի եր ձեռնարկում, ծածկում եյինք, թույլ չեյինք տա, վոր վերսին ձեռք քից խլում եյինք առաջին թափով նկարած պատկերը, ծածկում եյինք, թույլ չեյինք տալ վոր վերսին ձեռք առնի: Այսպիսով ե վոր փրկած ենք վորոշ նկարներ:

Այդ շրջանին նա նկարած և մեղալի մը շատ հաջող նախագիծ, այսուությունը ներկայացնող, բանվորական մի կազմակերպության համար, վոր արժանացած ե նման նկարների կոնքուրի մեջ առաջին մեղալի: Մասնակցած ե նաև Արքեյի դրական և նկարչական խմբակցության, վոր հետագային համբավավոր դարձավ խմբակցության անդամների ձեռք բերած հոչակով: Յերկու անդամ մասնակցած ե Արքեյի նկարչական ցուցահանդեսներին և դնահատության արժանացած է: Զանազան անձեր ուղած են զնել իր պատկերները, նրանցից մեկը, դերվիշի գլուխը նվերված է իրեն ծանթ մի տիկնոջ և Տիգրանի մահից հետո այդ տիկնոյն նկարը վերագրածուցած է նկարչի աղջկան:

Ուստի սահմանագրությունից հետո վերագրածավակի. Պոլիս, ուր մթնոլորտը իր յերանգավոր մշուշներով լույսի և սովորի առանձնահատուկ եֆեկտներով հրապուրում եր նրան: Նա ապրում եր իր ընտանիքով Սկյուտարի բարձունքի վրա մի համեստ տուն և իր ծախոցերը վերածելով նվազագույնի չանք եր տնում իր անկախությունը պահպանել:

Ժամանակի կրթական նախարարը հրավիրում է նրան և առաջարկում է մի բարձր պաշտոն: Տիգրամը մերժում է առարկելով, թե ուղում է Փարիզ վերադառնալ: Այն ժամանակ թանգարանի տեսուչը նրա համար ստեղծում է մի նոր պաշտոն: Ծրագրում են կազմել մի գալերիա յեվրոպական մյուլեների գլուխործոցներից յեղած լավագույն կոպիաներով և այդ դործի ղեկավարությունն ուղում են հանձնել Տիգրան

Յեսայանին: Ծրագիրն անցնում և պարլամենտից, բուժքեն քվեարկվում է, բայց Տիգրամը, վերջին պահում մերժում է այդ պաշտոնը: Նա անկեղծ զգացումով սիրում եր թյուրք ժողովրդին, բացարձակ մերժում եր հայ աղջայնականների այն անիմաստ կարծիքը թե կան ցեղային ընդունակություններ և անընդունակություններ բայց և միևնույն ատեն խորը ատելություններ ուներ թյուրք աղջայնականների նկատմամբ և չեր ուղում վորեւ բանով պարտական լինել նրանց: 1910-ին նա համարյա առանց փողի վերջին անգամ մեկնեց Կ. Պոլսից համարելով, վոր Փարիզի ձեղնահարկի մի սենյակում ավելի աղջատ և հանգիստ կը լիներ քան թե յեթե վորեւ շահով կապված լիներ Թյուրքիո որվան իշխանավորների հետ:

Իմպերիալիստական պատերազմին նա Փարիզ եր կը աղջկանը հետ մինչ գեւատի վորդին և կինը դտնը վում եյին Կ. Պոլսում: Նա անմիջապես ինքն իրան դեմ և հայուարաբում իմպերիալիստական պատերազմին և կրում ե այդպիսի վերքավորումի բոլոր հետեւանքները: Ռուսական հեղափոխության առաջին որեւից նա բուռն հետաքրքրությամբ հետեւում է դեսքերին: Հոկտեմբերյան հեղափոխության ծավալումը և նրա իմաստը մոռւմ են նրան վերաբննության յենթարկել իր անիշխանական սկզբունքները և նա հասկանում է պրոլետարիատի դիկտատորայի նշանակությունը և անհրաժեշտությունը: Նա բուռն կերպով պաշտպանում էր տնասակենան բարձրական առաջնորդությունը, բացատրում եր, ջանք եր թափում լուսաբանել և մեծ ուշադրությամբ հետեւում եր գեղարքերին և միենույն ատեն Փարանսական և յեղուական պրոլետարական շարժումներին:

Զինագագարից հետո նա գնում էր հաճախ Ալժերիացիներից և Մարոքցիներից հաճախված սրճարաններ և խոսում էր նրանց հետ գաղութային քաղաքա-

կանության մասին։ Նա շատ լավ գիտեք արարելեն լեզուն, վորը անվերջ ուսումնասիրում եր և սահուն կերպով խոսում եր բոլոր քարթառուները։

Բայց այդ բոլորով Տիգրան Յեսայանը մատնվեր եր նյութական մեծ զրկանքների, վորոնք քայլայեր ելին եր առողջությունը։ 1920-ին ստացեր եր թոքերի բորբոքում, վորը վերածվեր եր թոքախտի և 1921 թ. ոգոստոսի 10-ին, Փարիզում պատերազմի զոհերին հատկացված մի սանառորդայում ուր տեղավորել եցին նըրան իր Փրանսիացի բարեկամները, մահացալ նկարիչ Տիգրան Յեսայանը։

Տիգրան Յեսայանը այն հազվադեպ արտիստներից եր, վոր իմացական բաղմակողմանի կարողությունների ի սպաս են զնում արվեստի կատարման։ Նրա դժբաղությունն այն յեղավ, վոր նա չկարողացավ միաձուլել իր մտածողությունը և այրոխատիք ներճնչումը։ Նա հավակնում եր հասնել այդ յերկու տարրերի կառարելության և սինտեզին։ Նա շատ եր խստապահանջ և չեր կարողանում հաշտվել հարաբերական հաջողությունների հետ։ Նա տանջվում եր իր ներքին պայքարներից բայց չեր հրաժարվում նրանցից։ Նյութական մեծ զրկանքների գնով նա մնում եր անդիջող և հետապնդում եր իր նպատակը։ Նա ի հարկե չհասավ իր նպատակին, բայց մեռավ համոզված այն բանին, վոր այդ պայքարը կը շարունակվի և թե արվեստագիտական արտադրությունը չպետք է լինի միայն աչքի հաճույք, նրա նպատակը չե միայն զդայարանական հուզ մունք առաջ բերել այլ տողորդված բարձր մտածողությունով և հավասարապես արտիստական կատարելությամբ գեղարվեստական յերկը պետք ե հասնի մարդկային մտքի ամենաբարձր արտահայտության։

ԶԱՊԵԼ ՅԵՍԱՅԱՆ

ԿԱՏԱԼՈԳ

ՑՈՒՂԱՆԵՐԿ ԳՈՐԾԵՐ

Ստամբուլ, աշխառությանմեր մինչև 1895 թ.

- 1—7. Դպրոցական ետյուդներ, դեմքեր,
8. Ստամբուլ ձմռանը
9. Կանացի Փիդուրա
- 10—13. Ինտերյոր
- 14—16. Ստամբուլի ետյուդներ
- 17—18. Նավի վրա
19. Ստամբուլի շրջակայքը
20. Տղայի գլուխ

Փարիզ, 1895—1902

- 21—22. Փարիզի կտուրները
23. Հին Փարիզը
24. Աշխատանքի ժամանակ
25. Թատրոնում
26. Կամուրջի տակ
27. Փարիզի շրջակայքը
28. Նախուր-մորտ
29. Նկարչի կողման գարել Յեսայանի պորտրետ
30. Սրճարան
- 31—32. Փարիզ. ընդհանուր տեսարան
33. Փարիզի շրջակայքը

Ստամբուլ 1902—1905

- 34. Նկարչի հայրը և հորաքույրը
- 35. Խոհանոց
- 36. Ետյուղներ
- 37. Կալատա
- 38—40. ԲոսՓոր
- 41. Ստամբուլի հայկական թաղաժառ
- 42. Ակյուսար
- 43. ԲոսՓոր
- 44. Շուկա
- 45—47. Ստամբուլի ետյուղներ
- 48—53. Ստամբուլի շրջակայքը
- 54. Նկարչի հորաքույրը պորտդեն

Ստամբուլի ետյուղներ

- 55. Աղջկա գլուխ
- 56—57. Լյուկսմբուրդյան պուրակը
- 58—59. Նոտր տամ, Փարիզ
- 61. Կամուրջ
- 62. Մոնասուրիի պուրակը
- 63. Փարիզի տեսարանը կտուրներից
- 64—65. Փարիզի անկյունները
- 66—67. Պուրակում
- 68. Թատրոնում
- 69—71. Փարիզի շրջակայքում
- 72. Լյուկսենբուրդ
- 73. Սենայի ավերը
- 74. Տղամարդու գլուխ
- 75. Բնիթերցում
- 76. Նկարչի գատեր պորտեն, Սոֆիա Յեսայան
- 77. Բնիթերցում

Ստամբուլ 1908—1910

- 78—83. Ստամբուլի անկյունները
- 84. Ակյուսար
- 85—86. Վոսփորի ավերը
- 87. Վոսկեղջուր
- 88. Ստամբուլի անկյուններից
- 89. Նավից
- 90—91. Գլուխների ետյուղներ
- 92. Նկարչի հորաքույրը պորտին
- 93. Տաճկական որճարանում. եսկիզ
- 94. «Շախսեյ-վախսեյ» նկարի եսկիզը
- 95. Զ. Յեսայանի հոր պորտեն (Մկրտիչ Հովհաննեսյան)

Փարիզ 1910—1921

- 96—100. Ֆլուորաների կոռկիներ
- 101. Փողոց Փարիզում
- 102—107. Լյուկսենբուրդի պուրակում
- 108—112. Փարիզի շրջակայքում
- 113. Սենայի ավերը
- 114. Ս. Ժենեվեվայի փողոցը
- 115. Տաճկական դպրոց. 1910 թ.
- 116. Նկարչի գտներ պորտեն (Սոֆիկ Յեսայան)՝
- 117. Տղամարդու պորտեն
- 118. Կին Ակադեմիայի տարազով
- 119. Լյուկսենբուրդ
- 120. Շախսեյ-վախսեյ

Զրանկը Ստամբուլ 1902—1905

- 121—123. Ստամբուլի անկյունները
- 124—126. Ստամբուլի տները

127. Թբքուհիների դպրոցի մուտ
128. Տեսարան Սկյուտուրից
129. Մարմարա ծովի ափերը
130. Որթաքյոյի մզկիթը
131. Մղեթի մուտքը

Ստամբուլ 1908—1910

- 132—141. Ստամբուլի անկյունները
142. Ստամբուլի տեսարանը
143. Ստամբուլ ձմռանը
144. Մզկիթի առաջ
145. Ճաշարան Ստամբուլում
146. Մարայ-Բուրնի
147. Փողոցի վաճառականներ
148. Առաջաստանայինը
149. Նավակ
150. Տան մեջ
151. Թբքուհիների դպրոցը Ստամբուլում

Փարփակ 1910—1921

- 152—153. Լյուկսեմբուրգ
154. Բակը և կտուրները
155. Ինտերյուր
156. Սեղանի անկյունը
157—161. Փարիզի Արվակայքը
162. Խճուրենու ճյուղը
163. Թւիստում. Եսկիդ
164. Մյունիշը
165—167. Եսկիզներ
168—169. Ստամբուլ
Նկարներ պատճենվ, ածուխով և սանդինայով
170. Դերվիչ (1902—05)

171. Ինքնանկար (1906)
172. Ռուբեն Սելակի պորտրետ (1908—10)
173—177. Եսկիզներ (1908—10)
178. Ինքնանկար (1916)
179. Եսկիզ 1918
180. Նկար իլյուստրացիայի համար (1918)
181. Նկարչի վորդու՝ Հրանու Յեսայանի պորտրետ (1919թ.)
182. Մի անհայտ կնոջ պորտրետ
183. Մի անհայտ կնոջ պորտրետ (1910—21)
184. Բալերինա (1910—21)
185. Լյուկսեմբուրգի շատրվանը (1910—21)
186. Մի անհայտ կնոջ պորտրետ (1910—21)

(1921) 1921-1922
1922-1923 1923-1924
1924-1925 1925-1926
1926-1927 1927-1928
1928-1929 1929-1930
1930-1931 1931-1932
1932-1933 1933-1934
1934-1935 1935-1936
1936-1937 1937-1938
1938-1939 1939-1940

-20-



NL0937435

1935 - 294

5

28361